Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 2.

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի
2023 թ. Դեկտեմբերի 27

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Տաթևիկ Ստեփանյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ

Վաչե Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արաքսիա Սվաջյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Արմեն Գասպարյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Էդգար Պետրոսյան	ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀԱԱԳՎ անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչության պետ, ոստիկանության գնդապետ
Աիդա Մուրադյան	«Վորլդ Վիժն Հայաստան» Բարեգործական կազմակերպության «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի գլխավոր հանձնակատար
Նախշուն Ավանեսյան	«Հայաստանի Մանուկներ» բարեգործական հիմնադրամի սոցիալական աշխատանքի ղեկավար

Սպարտակ Սարգսյան	«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն
Գայանե Հովակիմյան	Մանկական զարգացման հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Միրա Անտոնյան	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Անահիտ Խաչատրյան	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Նիստին մասնակցում էին հրավիրյալներ՝

Լիլիթ Ավետիսյան	ՀՀ առողջապահության նախարարության երեխաների առողջության պահպանման բաժնի պետ

Հանձնաժողովի նիստը մեկնարկեց օրակարգի համաձայն: Պայմանավորված Հանձնաժողովի նախագահի բացակայությամբ, գործող օրենսդրության համաձայն վերջինիս համաձայնությամբ՝ նիստը վարում էր Հանձնաժողովի անդամ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը:

1. Հանձնաժողովի նիստին բացման խոսքով հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը: Նախարարի տեղակալը, ողջունելով նիստի մասնակիցներին և ներկաներին, ներկայացրեց 2023 թվականին իրականացված աշխատանքների հաշվետվությունները և կատարողականները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը ներկայացրեց նաև, որ հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է երեխաների՝ կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորման աճ՝ արձանագրելով, որ նշյալ ժամանակահատվածում գրանցվել է շուրջ 10 տարվա մանկալքության հիմքով շուրջօրյա

խնամքի հաստատությունում («Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ) խնամվող 16 տարեկան տղայի՝ կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորում:

Այս տեսանկյունից Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Տ. Ստեփանյանը կարևորեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից իրականացվող «Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորման կազմակերպման և ընտանիքներից երեխաների բաժանման ռիսկերի կանխարգելման» ծրագիրը (ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 17-ի N 743-Ն որոշում), որի շրջանակում իրականացվում են երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորմանն ուղղված աշխատանքներ: Տ. Ստեփանյանը նշեց նաև այն մասին, որ աշխատանքներն իրականացվում են պետության կողմից դրամաշնորհառու կազմակերպությունների միջոցով, որոնք իրականացնում են «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառումը: Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարողը մանրամասնեց նաև, որ նշյալ կազմակերպությունները մրցույթում հաղթող ճանաչվելուց հետո սկսում են աշխատանքներ իրականացնել շուրջօրյա խնամքի հաստատությունների հետ՝ վեր հանելով միջին և ցածր ռիսկայնություն ունեցող դեպքերը և մեկնարկում աշխատանքը՝ կենսաբանական ընտանիքների հետ:

Տ. Ստեփանյանը ներկայացրեց նաև շուրջօրյա խնամքի հաստատությունների մասին տեղեկատվություն՝ մասնավորապես նշեց, որ 5 շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք և դաստիարակություն են ստանում ընդհանուր 580 շահառու, որոնցից 317-ը հաշմանդամություն ունեցող երեխաներն են, 210-ը ծանր հաշմանդամություն ունեցող շահառուներն են, և միայն 53 շահառուներն են, որ հաշմանդամություն չունեն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը ներկայացրեց նաև Նախարարության ենթակայությամբ գործող երեխաների ցերեկային խնամք իրականացնող 6 հաստատությունները՝ նշելով, որ նշված հաստատություններից 3-ում գործում է ճգնաժամային բաղադրիչը: Նա հավելեց նաև, որ պետության կողմից դրամաշնորհառու 24 հասարակական կազմակերպությունները հանրապետության ողջ տարածքում տարվա ընթացքում իրականացնում են «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառումը:

Հաջորդիվ Տ. Ստեփանյանը ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում երեխաների այլընտրանքային խնամքի՝ որդեգրման և խնամատարության գործընթացի կազմակերպման ցուցանիշները:

Այս տեսանկյունից Տ. Ստեփանյանը նիստի ներկաներին հայտնեց, որ հաշվետու ժամանակատվածում ակտիվ համագործակցություն է ծավալվել ոլորտում գործող երկու կազմակերպությունների՝ «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ-ի և «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի հետ: «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամն իրականացրել է իրազեկման հանդիպումներ տարբեր մարզերում, դասընթացներ տարբեր մակարդակներում, անհատական խորհրդատվություններ խնամատար ծնողների և խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար և Նախարարության հետ կնքված հուշագրով ստանձնած այլ պարտավորություններ:

Բացի այդ, Տ. Ստեփանյանը հայտնեց, որ փորձարկվել է խնամատարության զարգացման նոր մոդել: «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ-ի հետ կնքված հուշագրի շրջանակում երեխաները կազմակերպությունից դուրս են բերվում և խնամատարության միջոցով ինտեգրվում համայնք: Այդ նպատակով խնամատար ծնողներն անցել են դասընթացներ, երեխաների հետ նախապես տարվել են հատուկ մասնագիտական աշխատանքներ, իսկ կազմակերպության կողմից խնամատարության անցման համար ի նպաստ պետական ծրագրի ըստ անհրաժեշտության իրականացվել է բնակարանային պայմանների բարելավում, կահավորում կամ այլ միջամտություններ: Այս առումով Տ. Ստեփանյանը վերահաստատեց, որ սոցիալական անբարենպաստ կենսապայմանների հիմքով երեխան չպետք է լքի ընտանիքը:

Տ. Ստեփանյանն ամփոփելով ներկայացրեց առաջիկա տարվա համար նախանշված միջոցառումները՝ օրենսդրական բարեփոխումներ, երեխայի իրավունքների պաշտպանության նոր համալիր ծրագիր, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի զեկույցի պաշտպանում, Նախարարության ենթակայությամբ գործող հաստատությունների վերազինում: Տ. Ստեփանյանը ներկաներին տեղեկացրեց նաև, որ նշյալ ժամանակահատվածում ԼՂ-ից բռնի տեղահանված երկու տարբեր ընտանիքներ հրաժարվել են երկու երեխաների խնամքից և դաստիարակությունից՝ պայմանավորված վերջիններիս ծանր առողջական վիճակով:

Հանձնաժողովի անդամները հարցուպատասխանի միջոցով վերահաստատեցին իրականացվող ծրագրերի կարևորությունը:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը ներկայացրեց օրակարգային երկրորդ հարցը՝ հայտնելով այն մասին, որ վերջերս դատարաններից ստացվում են գրություններ՝ ուղղված երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող դատական տարաբնույթ նիստերին մասնակցելու նպատակով: Տ. Ստեփանյանը հայտնեց, որ նշյալ գրությունները տրամադրվել են Հանձնաժողովի անդամներին և շահեկից գերատեսչություններին՝ դատական նիստերին մասնակցության ապահովման վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով: Որպես արդյունք, միաձայն կարծիք է ստացվել, առ այն որ երեխաների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը չունի նման լիազորություն (ամփոփաթերթն առկա է):

Ելնելով վերոգրյալից՝ Տ. Ստեփանյանն առաջարկեց նմանօրինակ գրություններ ստանալու պարագայում դիմել Բարձրագույն դատական խորհուրդ:

Հանձնաժողովի անդամ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ. Տերտերյանն առաջարկեց նշյալ հանգամանքի մասին ՀՀ արդարադատությանը հայտնել, որպեսզի վերջինս տեղեկացնի Բարձրագույն դատական խորհրդին:

Հանձնաժողովի անդամ, Մանկական զարգացման հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար Գ. Հովակիմյանն առաջարկեց ՀՀ արդարադատության նախարարությունից ստանալ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող բողոքների, հետաձգված գործերի վերաբերյալ վիճակագրություն:

Հանձնաժողովի անդամ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Խաչատրյանը հայտնեց, որ նման իրավիճակներն առաջանում են Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից տրած եզրակացությունների նկատմամբ վստահության պակասի հետևանքով: Մասնավորապես, Ա. Խաչատրյանն ընդգծեց վերջիններիս կարողությունների զարգացման, նրանց կողմից տրված եզրակացությունների կազմման մեթոդաբանության ներդրման անհրաժեշտության մասին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը ներկաներին հայտնեց, որ նշյալ դիտարկումը ներառված է առաջիկա տարիների համար մշակվող երեխաների իրավունքների պաշտպանության համալիր ծրագրում, ինչպես նաև

օրենսդրական բարեփոխումների շրջանակում (այդ թվում նշյալ մարմինների կարողությունների զարգացում, ստանդարտ մեթոդաբանության ներդրում):

3. Այնուհետև, Հանձնաժողովի անդամ Տ. Ստեփանյանը ներկայացրեց օրակարգային երրորդ հարցը՝ «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Հաստատություն) արձանագրված խնդիրների վերաբերյալ (Հաստատության ճգնաժամային բաղադրիչում խնավող երեխաներից մեկի կողմից Հաստատության երկու այլ երեխաների նկատմամբ իրականացված սեռական բռնության, հարուցված քրեական, կարճված գործերի, Հաստատության աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներին վերաբերյալ):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի Տ. Ստեփանյանը ներկայացրեց, որ համաձայն ՀՀ վարչապետի 2023 թվականի օգոստոսի 10-ի թիվ 02/11.7/27527-2023 հանձնարականի համաձայն՝ ս.թ. օգոստոսի 25-ի N 126-Ա/1 հրամանի՝ ստեղծվել է Աշխատանքային խումբ, որի շրջանակում սահմանվել են աշխատանքների ուղղությունները, պարբերաբար գնահատվել են ընթացիկ աշխատանքները, կրկին իրականացվել է Հաստատության բազմամասնագիտական թիմի կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ: Աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքների արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Հանձնաժողովի նախագահ Տ. Ստեփանյանը ներկայացրեց նաև, որ Նախարարությունը «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ-ի հետ համագործակցությամբ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ում 2023թ. երկրորդ եռամսյակից սկսած իրականացրել է իր ծավալներով եզակի՝ երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների շուրջ 2000 մասնակցի՝ այդ թվում սպասարկող անձնակազմի մասնակցությամբ վերապատրաստման եռամսյա դասընթաց:

Տ. Ստեփանյանը նշեց, որ հատկանշական է այն փաստը, որ Հաստատությունում խնամք են ստանում դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ, որոնք ըստ գնահատված կարիքների՝ ունեն համակցված բազմաթիվ խնդիրներ՝ վարքային տարբեր դրսևումներով:

Հանձնաժողովի անդամ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Խաչատրյանը արձանագրեց, որ նշյալ ժամանակահատվածում էականորեն բարելավվել է Հաստատության միջանձնային միջավայրը,

մասնագետների մասնագիտական կարողությունները՝ նպաստելով երեխաների ներդաշնակ զարգացմանը:

Հանձնաժողովի անդամները միաձայն նշեցին, որ նման իրավիճակներում հայտնված երեխաների հետ կարևոր են հետևողական և համակարգված իրականացվեն վերականգնողական աշխատանքները:

Հանձնաժողովի անդամներն ի գիտություն ընդունեցին ներկայացված տեղեկատվությունը:

4. Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Տ. Ստեփանյանը ներկայացրեց օրակարգային վերջին հարցը՝ Երեխաների իրավունքների պաշտպանության հանձնաժողովին կից ստեղծված օպերատիվ շտաբի նիստերի արդյունքները:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալը տեղեկացրեց, որ 2023 թվականին Հանձնաժողովին կից ստեղծված օպերատիվ շտաբը հանրապետության 10 մարզերից յուրաքանչյուրի հետ 2023 թվականի հոկտեմբերի 19-ից մինչ դեկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում ունեցել է աշխատանքային առցանց քննարկումներ յուրաքանչյուր մարզին բնորոշ ռիսկերը վերհանելու, հնարավոր խնդիրներին միջգերատեսչական համագործակցության շրջանակում լուծում տալու նպատակով: Հանձնաժողովի անդամներին և ներկաներին Տ. Ստեփանյանը հայտնեց, որ օպերատիվ շտաբի նիստերից մեկ քննարկումների ընթացքում ներկայացված դեպքի վերաբերյալ խիստ մտահոգված լինելու հիմքով՝ Նախարարությունը հրատապ դիմել է ՀՀ քննչական կոմիտե իրավական գնահատական տալու նպատակով: Որպես արդյունք, նշյալ դեպքի շրջանակում ՀՀ քննչական կոմիտեի կողմից հարուցվել է քրեական վարույթ:

Ի գիտություն ներկայացվեց. Օպերատիվ շտաբում ընդգրկվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալները, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալը, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ներքին գործերի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, Միասնական սոցիալական ծառայության, Միգրացիոն ծառայության, Երևանի քաղաքապետարանի և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հանձնաժողովի անդամ, «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Մ. Անտոնյանը մտահոգություն հայտնեց դատական գործընթացում գտնվող երեխաների իրավունքների պաշտանությանն առնչվող երկարաձգված գործերի վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀԱԱԳՎ անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչության պետ, ոստիկանության գնդապետ Է. Պետրոսյանն առաջարկեց թարմացնել Օպերատիվ շտաբի անդամների կազմը՝ պայմանավորված ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներկայացուցչի տարիքային կենսաթոշակի անցնելու հանգամանքով:

Անդրադարձ կատարելով Երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի բարեփոխման, ձեռնարկված օրենսդրական նախաձեռնությունների փաթեթին՝ Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Տ. Ստեփանյանը, ի պատասխան Հանձնաժողովի անդամ Է. Պետրոսյանի հարցին, նշեց, որ մտահոգության առարկա հանդիսացող «երեխայի անվտանգության ապահովման այն առարկաների և իրերի ցանկը, որոնք արգելված է վաճառել, նվիրել կամ այլ կերպ տրամադրել երեխաներին, պահել կամ կրել երեխաներին» կարգը սահմանելու համար հարկ է ունենալ համապատասխան լիազորող նորմ, որը ներառված է «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի նախագծում:

Նիստի ավարտին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց դիտարկումների, առաջարկների համար և վստահեցրեց, որ վերջիններս կդառնան համագործակցության շրջանակում քաղաքականության մի մաս:

Օրակարգային հարցերի ներկայացումից հետո Հանձնաժողովի անդամները հարցուպատասխանի միջոցով ամփոփեցին առաջիկա անելիքները և արդյունքում որոշվեց.

1. Հաշվի առնելով դատարանների անկախ մարմին լինելու հանգամանքը՝ այնուամենայնիվ ի գիտություն հայտնում ենք, որ Երեխաների Հանձնաժողովի նիստի շրջանակում քննարկվել է Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին դատական նիստերին հրավիրելու հարցը և որոշվել է նմանօրինակ գրությունների դեպքում դիմել Բարձրագույն դատական խորհրդին

առ այն, որ երեխայի խնամքի կազմակերպման հարցի որոշմանը կամ երեխայի ցանկացած իրավունքի իրացման գործընթացին մասնակցությունը դուրս է երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործառույթների շրջանակից, ուստի Բարձրագույն դատական խորհրդին նշված հարցով դիմելու առաջարկին Արդարադատության նախարարությունը որևէ առարկություն չունի:

2. ՀՀ արդարադատության նախարարությունից ստանալ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող բողոքների, հետաձգված գործերի վերաբերյալ վիճակագրություն:
3. Դիտարկել երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին կից ստեղծված օպերատիվ շտաբի անդամների կազմը վերանայելու հարցը՝ այն կրկին գործարկելու անհրաժեշտության պարագայում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան